# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» հունիսի 2020թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ)

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած և միաժամանակյա բանակցությունների հրավիրված մասնակիցներից «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն ներկա է գտնվել միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրված նիստին: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, նիստին ներկա մասնակցի առաջարկած գինն է

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Ինքնարժեք** | **Շահույթ** | **ԱԱՀ** | **Ընդհանուր գինը** |
| 7 | Մաքրող կտորներ | 223 575 | 11 216.67 | 46 958,33 | **281 750** |

2. **Տվյալներ՝ ընտրված մասնակիցների վերաբերյալ.**

Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.

*- 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «ՌԵԱՔԻՄ» ՍՊԸ-ին,*

*-1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ին,*

*-7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին,*

*Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-ընթացակարգը 2-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին),

-հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/26» ծածկագրով ընթացակարգը 2-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

-հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է).

-գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

*Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արման Ղուկասյան

Հովհաննես Ստեփանյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան